## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՎԱՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**31 ՄԱՐՏԻ 2014թ.**

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 77.1-77.6-րդ հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզպետի 2014 թվականի մարտի 17-ի N36-Ա որոշումը, ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի աշխատանքային խմբի կողմից (խմբի ղեկավար ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Ս.Ավետիսյան) ՀՀ Սյունիքի մարզի Վարդավանքի գյուղապետարանում 2014 թվականի մարտի 31-ին իրականացվեց վարչական հսկողություն հետևյալ բնագավառներում՝

Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների իրականացում, հողօգտագործում:

1. Վարչական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը՝ կից հավելվածով ներկայացված հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ:

2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3. Վարդավանք գյուղական համայնքի ղեկավարը վարչական հսկողության արդյունքների և վարչական հսկողությունն իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ առարկություններ չի ներկայացրել:

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Սյունիքի մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Վարդավանք գյուղական համայնքի ղեկավարին:

**ՀՀ Սյունիքի մարզի համայնքներում վարչական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի ղեկավար՝** ________ **Ս.Ավետիսյան**

**ՀՀ Սյունիքի մարզի Վարդավանք գյուղական համայնքի ղեկավար՝** **Գ.Կոստանդյան**

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Վարդավանք գյուղական
համայնքում իրականացված վարչական հսկողության
արդյունքների ամփոփման վերաբերյալ
31-03-2014թ. N1 արձանագրության

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՎԱՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

| Դրույթների անվանումը | Պահպանված է | Թերի է պահպանված | Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| Համայնքի ղեկավարի ներկայացմամբ կամավոր լիազորությունների իրականացման կարգի և անհրաժեշտ ֆինանսական միջոցների վերաբերյալ որոշման առկայություն | X | X | Պահպանված չէ | Խախտվել է "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով սահմանված պահանջը | Առաջարկվում է ընդունել համապատասխան իրավական ակտ | Եռամսյա ժամկետում |
| Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ որոշման առկայություն | X | X | Պահպանված չէ | Խախտվել է "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 33-րդ կետով սահմանված պահանջը | Առաջարկվել է ընդունել համապատասխան որոշում | Եռամսյա ժամկետում |
| Համայնքի ավագանու առնվազն երկու ամիսը մեկ անգամ կայացած նիստերի արձանագրությունների առկայություն | X | X | Պահպանված չէ | Խախտվել է "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի երկրորդ մասով սահմանված պահանջը | Առաջարկվել է այսուհետ ավագանու նիստերը հրավիրել օրենքով սահմանված ժամկետներում | Անհապաղ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Համայնքի ղեկավարի որոշմամբ հաստատված աշխատակազմի գործավարության կարգի առկայություն | X | X | Պահպանված չէ | Խախտվել է "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով սահմանված պահանջը | Առաջարկվել է ընդունել համապատասխան իրավական ակտ | Երկամսյա ժամկետում |
| Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանուն ներկայացված առաջարկության առկայություն | X | X | Պահպանված չէ | Խախտվել է "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 10,1-րդ կետով սահմանված պահանջը | Առաջարկվել է հանդես գալ համապատասխան առաջարկությամբ | Երկամսյա ժամկետում |
| Օրենքով սահմանված կարգով՝ համայնքի զարգացման քառամյա ծրագրի և (կամ) տարեկան բյուջեի նախագծերի վերաբերյալ հանրային բաց լսումներ և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման վերաբերյալ աշխատանքների առկայություն | X | X | Պահպանված չէ | Խախտվել է "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 33,1-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով սահմանված պահանջը | Առաջարկվել է այսուհետ կազմակերպել նմանատիպ լսումներ | Անհապաղ |